Գնիշիկ

Բնակչության թիվը՝ 199

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գնիշիկի համայնքն իր մեջ ընդգրկում է Գնիշիկ և Մոզրով գյուղերը։ Գնիշիկ գյուղը գտնվում է մարզկենկտոնից 24կմ հեռավորության վրա, հարավ արևմտյան մասում, սահմանակից է մարզի Արփի, Եղեգնաձոր, Ազարագաձոր, Խնձորուտ , Խաչիկ, Արենի, Աղավնաձոր համայնքներին, ինչպես նաև

Վայոց ձորի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքի՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը։ Ծովի մակարդակից գտնվում է 2060մ բարձրության վրա։ Կլիման բարեխառն է, ձմռանը մեղմ է, բայց ձյունառատ, ամռանը զով է։ Գնիշիկ գյուղում բնակվում են 71անձ, որոնց մի մաս ձմռանը տեղափոխվում են այլ բնակավայրեր։

Զբաղվածության ոլորտներն են՝ գյուղատնտեսությունը, անասնապահությունը և մեղվաբուծությունը։ Վարչական տարածքը կազմում է 6417հա :

Գնիշիկ գյուղն իր պատմության ընթացքում մի քանի անգամ կառուցվել և քանդվել է, այդ են վկայում տարբեր գրականություններից մեզ հասած տվյալները, ներկայումս գոյություն ունեցող տարբեր ժամանակի դամբարանադաշտերը, գերեզմանոցները, խաչքարերը, 9-13րդ դարերի եկեղեցին, մատուռները, ջրաղացները։ Չնայած այն բանին, որ գյուղի տարածքում ներկայումս էլ կա 4րդ, 5րդ դարերի խաչքարեր, սակայն ըստ պատմածի նախավերջին անգամ գյուղը վերակառուցվել է 1770- ական թվականներին, բնակիչները եկել են Նախիջևանից, Ղարաբաղից Ալաշկերտից և այլ տեղերից։

1950 ական թվականներին գյուղում 150 ծուխ կար։ Նախկին Եղեգնաձորի շրջանի հացահատիկի զգալի մասը մթերվում էր հենց Գհիշիկ գյուղից, որի համար էլ գյուղը համարվել է մեր տարածաշրջանի հացի շտեմարանը։

1960 ական թվականներից սկսած տարածքի սողանքի պատճառով գյուղի բնակչությունը տարիների ընթացքում տեղափոխվել Արփա գետի հովտում նոր կառուցվող Արփի գյուղը։

1975 թվականին Գնիշիկ և Արփի գյուղերի մեջտեղում կառուցվել է ևս մեկ գյուղ՝ Մազրովը։ Գնիշիկցիների մեծ մասը տեղափոխվել են Արփի, իսկ մնացած մասը՝ Մոզրով։

13-րդ դարում Գնիշիկը եղել է Օրբելյան Իշխանների ամառանոցը։

Ինչպես նշվեց վերևում՝ Մազրով գյուղը հիմնվել է 1975 թվականին, 1988-90 ականներին ունեցել է մոտ 35 տնտեսություն, ժողովրդի զբաղվածությունը հիմնականում եղել է անասնապահությունը։

1991 թվականին կազմավորվել է Գնիշիկի համայնքը, Գնիշիկ և Մոզրով գյուղերի ընդգրկումով։ Գյուղն ունի հիմնական դպրոց: